ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
19.08.2016թ.

Նիստին մասնակցում էին՝ Ս. Ամիրխանյանը, Մ. Մարինոսյանը, Ա. Մարուխյանը, Պ. Հակոբյանը, Ա. Հովեյանը, Ս. Գապոյանը, Ա. Դվոյանը Գ. Ղարիբյանը
Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՕՐԱԿԱՐԳ

1. Գավառ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվեկշիռը հաստատելու մասին:
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ այլ հողատեսքի գործառնական նշանակությունը 0.2հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և փոփոխություն կատարելուց հետո այն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող ք. Գավառ Հացառատ թաղամաս Բոքւոնազյան 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք N11 հասցեում գտնվող Հացառատ թաղամասի N1 ՕԿՋ-ի զբաղեցրած և պահպպանման ու սպասարկման համար նախատեսված ջրային նպատակային նշանակության 0.36739հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և փոփոխություն կատարելուց հետո այն աճուրդային կարգով օտարելու մասին:
4. Գավառ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:
5. Գավառ քաղաքի Կաբելագործների փողոց N72/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող օրինական ճանաչված 17.82 ք.մ. արտաքին մակերեսով /16.12ք.մ. ներքին մակերեսով/ կրպակի և կրպակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 35.64ք.մ. մակերեսով հողամասը՝ մրցութային կարգով վարձակալան իրավունքով տրամադրելու, վարձավճարների մեկնարկային գինը և օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
6. Գավառ համայնքի 2016թ. բյուջեի պահուստային ֆոնդից գումար տրամադրելու, պահուստային ֆոնդի նախահաշվում և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցում փոփոխություն կատարելու մասին:
7. Գավառ համայնքի 2016թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
8. Հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին:
9. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելումասին:
10. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող ք. Գավառ Կաբելագործների փողոց N8/2 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.000888հա մակերեսով հողամասը՝ Տիգրան Վաչականի Գևորգյանին ավտոտնակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասը ընդլայնելու համար, առանց մրցույթ տրամադրելու և հողամասի տարեկան վարձավճարի չափը և օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
11. Գավառ քաղաքի Միքայելյան փողոց, 3-րդ նրբանցք N3/3 հասցեում գտնվող Սոնիկ Մամիկոնի Ամիրխանյանին, Սիմոն Ռազմիկի Ամիրխանյանին սեփականաշնորհված անասնագոմի զբաղեցրած և պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.15967հա մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու, վարձավճարի տարեկան չափը և օգտագործման ժամկետը սահմանելու մասին:
12. Սեփականության իրավունքով Գավառ քաղաքային համայնքին պատկանող Գավառ քաղաքի Բարեկամության փողոց, թիվ 42 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 16 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին:
13. Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց N31/2 հասցեում գտնվող Մկրտիչ Գարսևանի Թոփլաղալցյանի կողմից ինքնակամ կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող օրինական ճանաչված 66.0ք.մ. մակերեսով ավտոտնակը և ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 66.0ք.մ. մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարելու մասին:
14. Գավառ համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին:
15. ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին:

ՀԱՐՑ 1

ՈՐՈՇՈՒՄ 41. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Ա. Դվոյանը

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետիպահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գավառ համայնքի 2016թ. հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվեկշիռը՝ համաձայն հաշվետվության ձևի:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 2

ՈՐՈՇՈՒՄ 42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱ 0.2ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Դվոյանը, Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, ,,Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու'' N1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով համայնքում գործող Գազաբաշխիչ կայանի /ԳԲԿ/ ապամոնտաժման ու նոր ԳԲԿ-ի կառուցման մասին ,,Գազպրոմ Արմենիա'' ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալի դիմումը, նկատի ունենալով, որ ժամանակին հայկական ՍՍՀ մինիստրների խորհրդի 08 մայիսի 1987թ. N316 որոշմամբ կատարվել է նման հողհատկացում, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի գործառնական նշանակության 0.2հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ

ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ,,Էներգետիկայի օբյեկտների հողեր'' գործառնական նշանակությամբ՝ Գավառ համայնքում նոր գազաբաշխիչ կայանի կառուցման համար:

2. Համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, Գավառ համայնքի գյուղատնտեսական նշանակության 0.2հա մակերեսով այլ հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողերի կատեգորիա՝ հետագայում այն ուղղակի վաճառքի միջոցով ,,Գազպրոմ Արմենիա'' Փակ բաժնետիրական ընկերությանը օտարելու համար, նոր գազաբաշխիչ կայանի կառուցման նպատակով, հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանելով 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 3

ՈՐՈՇՈՒՄ 43. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍ, ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ N1 ՓԼՎԱԾ ՕԿՋ-Ի ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՋՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.36739ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՅՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Պ. Հակոբյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ՀՀ Կառավարության 29 դեկտեմբերի ,,Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու'' N1920-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի ,,Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին'' N286-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ Գավառ համայնքի Հացառատի N1 ՕԿՋ փլված է և չի շահագործվում ըստ նպատակային նշանակության, հաշվի առնելով, որ այն գտնվում է Հացառատ թաղամասի գերեզմանոցին անմիջապես հարող տարածքում, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող ք. Գավառ Հացառատ թաղամաս Բուռնազյան 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք N11 հասցեում գտնվող Հացառատի N1 փլված ՕԿՋ-ի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված ջրային նպատակային նշանակության 0.36739հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ սգո ծառայությունների մատուցման նպատակով, ըստ նպատակային օգտագործելու համար:
2. Համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0527-0004 կադաստրային ծածկագրի ջրային հողերի նշանակության 0.36739հա մակերեսով հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, հետագայում այն աճուրդային կարգով օտարելու նպատակով՝ հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանելով է 1 ք.մ.-ի համար 810 /ութ հարյուր տաս/ ՀՀ դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 4

ՈՐՈՇՈՒՄ 44. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Հովեյանը, Ա. Դվոյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի և 04.06.2015թ. ընդունված ՀՀ Կառավարության N680-Ն որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գավառ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 5

ՈՐՈՇՈՒՄ 45. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԿԱԲԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ N 72/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 17.82Ք.Մ. ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ /16.12Ք.Մ. ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ/ ԿՐՊԱԿԸ և ԿՐՊԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 35.64Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N912-Ն որոշման պահանջներով, Գավառ համայնիք ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Կաբելագործների փողոց N72/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող օրինական ճանաչված 17.82ք.մ. արտաքին մակերեսով /16.12ք.մ. ներքին մակերեսով/ կրպակը և կրպակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 35.64ք.մ. մակերեսով հողամասը՝ մրցութային կարգով վարձակալական հիմունքներով տրամադրելուն, վարձավճարների մեկնարկային գինը սահմանել համաձայն Գավառ համայնքի ավագանու 24.10.2012թ. թիվ 9 նիստի 43 որոշման, իսկ օգտագործման ժամկետը՝ մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 6

ՈՐՈՇՈՒՄ 46. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՏՅՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Ա. Հովեյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2016թ. բյուջեի պահուստային ֆոնդից՝

1. 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել ընդամենը 6315.000 /վեց միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ, որից

   1/ 4000000 /չորս միլիոն/ ՀՀ դրամը Գավառ քաղաքի փողոցների հետիոտների անցումների, նշագծումների և ճանապարհային նշանների ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներն իրականացնելու համար

   2/ 1320000 մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամը Գավառ քաղաքի ոչ ասֆալտապատ /գրունտային/ փողոցների խճալցման, հարթեցման և պահպանման աշխատանքները իրականացնելու համար:

   3/ 995 000 /ինն հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամը Գավառ քաղաքի Բոշնաղյան 3 բազմաբնակարան բնակելի շենքի հետնամասի հատվածում Գավառագետի հունի գաբիոնների ընթացիկ նորոգման աշխատանքներն իրականացնելու համար:

   4/ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ, դպրոցի նոր շենքի կառուցման պատճառով ,,ՀՀ ԴՕՍԱԱՖ'' ՀԿ-ի ,,Գավառի ավտոդպրոց'' ՍՊԸ-ի մասնաշենք տեղափոխված Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցին՝ ջրահեռացման համակարգի ընթացիկ վերանորոգման համար:
2. 4861 /այլ ծախսեր/ տնտեսագիտական հոդվածով Սիրիայից արտագաղթած, այժմ՝ Գավառ քաղաքում բնակվող և Գավառի բժշկական կենտրոն ՊՈԱԿ-ում ախատող բժիշկներ Վարանեթ Կիրակոսյանին և Հակոբ Թամեղյանին տրամադրել 360 000 /երեք հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ՝ որպես իրենց կողմից վարձակալած բնականների վեց ամսվա վարձավճար /յուրաքանչյուրին տրամադրելով 180 000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Պահուստային ֆոնդի նախահաշվով և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով նախատեսված IV եռամսյակի 2500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարը տեղափոխել III եռամսյակ՝ պահպանելով բյուջեի համամասնությունները:

Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ		
ԱՐԾՐՈՒՆ ԴԱՎՈՅԱՆ		
ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ		
ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ		
ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ		
ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ		
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ		
ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ		

ՀԱՐՑ 7

ՈՐՈՇՈՒՄ 47. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ Ս. Ամիրխանյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ, 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և ,,Բյուջետային համակարգի մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2016թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացման հաշվին ֆինանսավորվող 08 բաժնի 2 խմբի 7 դասի /հուշարձաններ և մշակութային արժեքների վերանորոգում և պահպանում/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 11254000 /տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար/ ՀՀ դրամով որից՝

1. 2454000 /երկու միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար/ ՀՀ դրամը ավելացնել 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ/;/ գործառնական դասակարգման 5113 /շենք ևշինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին Գավառ քաղաքի Պետրովի փողոցի վրա գտնվող /Հացառատ թաղամասի ջրմուղի պոմպակայանի հարևանությամբ/ կամրջի հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելու համար:
2. 3780000 /երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 08 բաժնի 2 խմբի 3 դասի /մշակույթի տներ/ գործառնական դասակարգման 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին՝ Մշակույթի տան շենքի մի հատվածի կապիտալ վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար:
3. 3300000 /երեք միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել 09 բաժնի 2 խմբի 1 դասի /հիմնական ընդհանուր կրթություն/ գործառնական դասակարգման 5113 և 5134 տնտեսագիտական հոդվածներին, որից 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին 3240000 /երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ՝ Գավառի թիվ 5 հիմնական դպրոցի ,,Արամայիս Յուրիկի Ոսկանյանի անվան ՆԶՊ դասասենյակի'' հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի և աշխատանքների ձեռք բերման համար:
4. 750000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 01 բաժնիo 1 խմբի /օրենսդիր և գործադիր մարմիններ/ գործառնական դասակարգման 5129/ այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին՝ տեսանկարահանման սարքավորումների ջեռք բերման և տեղադրման համար:
5. 970 000 /ինն հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 06 բաժնի 3 խմբի 1 դասի /ջրամատակարարում/ գործառնական դասակարգման 5112 և 5134 տնտեսագիտական հոդվածներին, որից 5112 /շենք և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածին 925 000 /ինն հարյուր քսանինգ հազար/ ՀՀ դրամ, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ՝ Գավառ քաղաքի Ազատության-Շահումյան և Զորավար Անդրանիկ-Օգոստոսի 23 փողոցների խաչմերուկներում ցայտաղբյուրների տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերի և աշխատանքների ձեռք բերման համար:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 8

ՈՐՈՇՈՒՄ 48. ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Պ. Հակոբյանը, Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ հոդվածի 20) կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով երկարացնելու Գավառի քաղաքապետարանի և Գավառ քաղաքի Բոշնաղյան 20/38 հասցեի բնակիչ Օնիկ Բալագոզյանի միջև 2004 թվականի մարտի 31-ին կնքված Գավառ քաղաքի Բոշնաղյան 20 հասցեում գտնվող ավտոտնակի տակի սպասարկման 41.3ք.մ. մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը:
2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը թողնել անփոփոխ՝ 1035 /մեկ հազար երեսունհինգ/ ՀՀ դրամ

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՑԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 9

ՈՐՈՇՈՒՄ 49. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Ա. Դվոյանը

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին'' ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի և ,,Տեղական Ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 16 հոդվածի 2 մասի դրույթներով, նկատի ունենալով, որ ,,Յազդ-97'' ՍՊԸ վճարել է գույքահարկի մայր գումարները, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ձիջել ,,Յազը-97'' ՍՊԸ /ՀՎՀՀ 08408853/ գույքահարկի տույժը՝ 42380 /քառասուներկու հազար երեք հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 10

ՈՐՈՇՈՒՄ 50. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք. ԳԱՎԱՌ ԿԱԲԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ N8/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.000888 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ՏԻԳՐԱՆ ՎԱՉԱԿԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՎՏՈՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Գ. Ղարիբյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին 16 հոդվածի 20 կետի և ՀՀ Կառավարության 12.04.2006թ. N286 որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող ք. Գավառ Կաբելագործների փողոց N8/2 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 0.000888հա մակերեսով հողամասը՝ կառուցապատման իրավունքով առանց մրցույթ տրամադրել Տիգրան Վաչականի Գևորգյանին, ավտոտնակ կառուցելու նպատակով՝ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի ընդլայնման համար, իսկ հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 2700 /երկու հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ մինչև 2050թ ներառյալ օգտագործման ժամկետով:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 11.

ՈՐՈՇՈՒՄ 51. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N13/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՈՆԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ, ՍԻՄՈՆ ՌԱԶՄԻԿԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.15967ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Հովեյանը, Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետով և ՀՀ հողային օրենսգրքի 118 հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Սոնիկ Մամիկոնի Ամիրխանյանին, Սիմոն Ռազմիկի Ամիրխանյանին սեփականաշնորհված ք. Գավառ Միքայելյան փողոց, 3-րդ նրբանցք N13/3 հասցեում գտնվող անասնագոմի զբաղեցրած և պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.15967հա մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամկետով և հողամասի վարձավճարի չափը սահմանել տարեկան 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎԵՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 12

ՈՐՈՇՈՒՄ 52. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 42 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 16 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. ԱՄիրխանյանը, Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածի 20 կետով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող՝ Գավառ քաղաքի Բարեկամության փողոց թիվ 42 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 16 բնակարանը

սեփականության իրավունքով անհատույց օտարելու Հրաչուհի Վաչիկի Բոստանչյանին՝ նրա հետ կնքելով նշված հասցեի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 13

1. ՈՐՈՇՈՒՄ 53. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑ N 31/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԿՐՏԻՉ ԳԱՐՍԵՎԱՆԻ ԹՈՓԼԱՂԱԼՑՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 66.Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ 66.0Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ՝ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Ալեքսանյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Ղարիբյանը, Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ ք. Գավառ Բոշնաղյան փողոց N31/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 66.0ք.մ. մակերեսով ավտոտնակը՝ յուրաքանչյուր 1ք.մ.-ի համար 1300 /մեկ հազար երեք հարյուր/՝ ընդամենը, 85800 /ութսունհինգ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ և ավտոտնակի զբաղերած ու սպասարկման համար նախատեսված 66.0ք.մ. մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/, ընդամենը 81972 /ութսունմեկ հազար ինն հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ արժեքներով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու Սևակ Մկրտչի Թոփլաղալցյանին, միաժամանակ վաճառքի գնին հավելելով նաև տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքի պետական գրանցման համար իրականացված վճարը, որը կազմում է 28500 /քսանութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՐՑ 14

ՈՐՈՇՈՒՄ 54. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Գ. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Ս. Գապոյանը

Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին'' օրենքի 14-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 14-րդ և 19.1-րդ կետերի համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Գավառ համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների բարելավման նպատակով, ի կատարումն Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի /հետագա տեքստում՝ ,,Ծրագիր''/ շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրի 5.01 բաժնի ,,d'' կետի, ինչպես նաև՝ Աբովյանի, Բյուրեղավանի, Ճամբարակի, Չարենցավանի, Գավառի, Հրազդանի, Նոր Հաճնի, Մարտունու, Սևանի, Ծաղկաձորի, Վարդենիսի, Եղվարդի քաղաքապետարանների և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված՝ Ծրագրի իրականացման և աջակցության համաձայնագրով նախատեսված՝ Գավառ համայնքի իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գավառ համայնքում աղբահանության աշխատանքների բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի քաղաքային բնակավայրերի համայնքների մասնակցությամբ ստեղծել ,,ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ'' ֆիրմային անվանմամբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն առևտրային կազմակերպություն:
2. Նոր ստեղծվող ընկերության կանոնադրական կապիտալում Գավառ համայնքի մասնակցությունը սահմանել կանոնադրական կապիտալի ընդհանուր բաժնեմասի 10 /տասը/ տոկոսի չափով:
3. Լիազորել Գավառի քաղաքապետի տեղակալ Գրիգոր Ռազմիկի Բոշյանին (անձնագիր AM0521953, տրված 17.11.2011թ. 040-ի կողմից)/ Գավառ համայնքի անունից, որպես ներկայացուցիչ մասնացել նոր ստեղծվող ընկերության հիմնադրման գործառույթներին, այդ թվում՝ մասանակցել հիմնադիր ժողովներին, ստորագրել հիմնադիր պայմանագիրը, Ընկերության կանոնադրությունը, հիմնադրման մասին որոշումները, արձանագրությունը, այլ փաստաթղթեր, ինչպես նաև իրականացնել ցանկացած գործառույթ՝ կապված նոր ստեղծվող ընկերության հիմնադրման ու պետական գրանցման հետ:

Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ		
ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ		
ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ		
ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ		
ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ		
ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ		
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ		
ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ		

ՀԱՐՑ 15

ՈՐՈՇՈՒՄ 55. ,,ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Կ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Հովեյանը, Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26 կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ 12.01.2016թ. թիվ 1 նիստի թիվ 3 որոշմամբ հաստատված ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություն.

1. ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացնել 1 մեթոդիստի հաստիք՝ դրույթը սահմանելով 72752 /յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ:
2. ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում պակասեցնել 1 խմբակավարի հաստիք /ապլիկացիա, 0.75 դրույք, 18 ժամ/:

Կողմ (8)	Դեմ (0)	Չեռնպահ (0)
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ		
ԱՐԾՐՈՒՆ ԴՎՈՅԱՆ		
ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ		
ԳԱՐԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ		
ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ		
ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ		
ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ		
ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ